

Աւետարանի այս խօսքերը այրում էին Մէկսուէլին, տանջում նրա խիղճը:

— Ես բարի հովիւ չեմ եղել, — ասում էր նա ինքն իրան, — Ես վարձկան եմ եղել, որ չի հոգում ոչխարների մասին:

Եւ նա տոչորւում էր իւր մեղքը թեթեւացնելու ցանկութեամբ, տենչալով որչափ կարելի շուտ սկսել իւր քարոզը Ուղիղ Անկիւնի բնակիչների համար:

Ուռւ. թարգմ. Մամբրէ վարդապետ.

(Շարունակելի).

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա.

«Սիրա սուրբ հաստատեալ յիս, Աստուած,
«Է Հոգի ուղիղ նսրոգեալ ի փորի իմում»:

Ապաշխարել՝ նշանակում է զղջալ մեղքերը, ինքն իրան դատապարտել և իւր կեանքը ճանաչել վատ: Սովորաբար մենք միշտ մեղանից բաւական ենք լինում, որքան էլ վատ ապրենք, մենք չենք զգում այդ, չենք տանջւում դրանով: Մենք յաճախ վրդովւում ենք կեանքի կարգերով, նրա կազմով, նախատում մարդկանց, իսկ մենք մեղ չենք մեղադրում: Այդ սխալ է: Մեզ իրաւունք չի տրուած ուրիշի դատաւորը լինել «Մի դատէք, զի մի դատիցիք»: Մեր բոլորիս դատաւորը՝ Աստուած է: Մեր գործն է ամենից առաջ մեղ ճանաչել, չպէտք է մտածել այն մասին թէ ինչ կամ ինչպէս են անում ուրիշները, այլ այն մասին թէ ինչպէս պէտք է ապրենք մենք ինքներս: Կեանքը իջևան չէ, որտեղ ամենքը պահանջում են իրանց համար յարմարութիւն, կեղտոտում են, ամեն ինչ իրար

խառնում, իսկ հաւաքել-մաքրելը թողնում են ուրիշին։
Կեանքը՝ Աստուծոյ քայքայուած, աչքի թողած կալուածն
է. ուր Տէր-Աստուածը ուղարկում է մեզ աշխատելու։

Մեր բռնած անկիւնում՝ շատ անկարգ բաներ կան,
կեանքի մէջ բազմաթիւ ապօրինութիւններ, վատութիւն-
ներ կան, նայենք մեզ վրայ, ստուգենք արդեօք այն ենք
անում, ինչ որ պէտք է անել, այնպէս ենք աշխատում,
ինչպէս հրամայել է Տէրը։ Ինչի վրայ ենք գործադրել
Աստուծոյ տուած ոյժերը։ Կեանքը նման է գետի, որ հա-
զարաւոր վերստ է ձգւում։ Նրա ափին դնւում են շատ
գիւղեր, քաղաքներ, գործարաններ, նրանք բոլորը կեղ-
տոտում, թունաւորում են ջուրը և գետը, որքան առաջ
գնայ, այնքան աւելի կաղտորուի։ Բայց ժամանակ առ-
ժամանակ զանազան տեղերում դուրս են գալիս մարդիկ,
որոնք կամրջի նման կեանքի հոսանքի առաջն են առնում,
կանգնեցնում նրա պղտոր ջրերը, մաքրում, անց են
կացնում նրանց, ինչպէս զտիչ գործիքի միջից, իրանց
մաքուր պայծառ սրտով և կեանքի ջրերը հոսում են
առաջ աւելի մաքուր, աւելի պարզ։ Ի՞նչ ենք արել մեր
կեանքի անցեալ տարիներում, պղտորել ենք, թէ մաքրել
այն վտակները, որոնք հոսել են մեր մօտով, որպիսի հոգ-
ւով ենք մօտենում կեանքին, որպիսի ամանով ենք ջուր
վերցնում։ Ամենամաքուր վտակներն իսկ կարելի է պղտո-
րել կեղտոտ ամանով, և մեր կեանքը վատ է ամենից
առաջ նրանից, որ մենք ևս վատ ենք։ Երկրի վրայ կա-
րելի է, նոյն իսկ պարտաւորեցուցիչ է վարել բոլորովին
այլ կեանք, քան այն, ինչ որ մենք վարում ենք. բայց
դրա համար անհրաժեշտ է, որ մենք ինքներս փոխուենք,
որ մենք հասկանանք թէ այժմ ապրում ենք կոշտ, անաս-
տուած, տմարդի, որ մենք զգանք, վերջապէս, որ կեանքի
մէջ, որտեղ միլիոնաւոր մարդիկ հազարաւոր տարիների
ընթացքում արտաշնչում են անարդարութիւն, բռնաբա-
րութիւն, անառակութիւն, անհնարին է չխեղդուել։ Ան-
հրաժեշտ է, որ մեզ զգուելի դառնայ մեր սովորական
կեանքի կեղտոտութիւններն, որ մենք աշխատենք այդ

հեղձուցիչ, ապականուած տեղից փոխադրուել զէպի Աստուածային ընդարձակութիւնը: Անհրաժեշտ է, որ մենք արմատապէս փոխենք մեր մտքերը, զգացմունքներն ու գործերը, որ մենք ամեն բանի վրայ նայենք, ամեն բան անենք նոր կերպով. ըստ Աստուծոյ, ըստ վարդապետութեան Քրիստոսի: Այն տակաւը, որը երկար ժամանակ գործադրել ենք հոտած և աղի ջրի համար, անպատճառ պէտք է տաք ջրով մաքրենք, որպէս զի կարողանանք նոր, թարմ ջրի համար գործածել: Պէտք է ուրեմն մարդկանց միջից էլ դուրս անել կոշտութեան, բռնաբարութեան, ինքնասիրութեան և անառակութեան հին, գաղանական, հեթանոսական հոգին: Նոր, Աստուածային կեանք կարելի է վարել երկրի վրայ, բայց դրա համար պէտք է որ մենք ևս դառնանք, նոր, Աստուածային մարդիկ: Պէտք է ապաշխարել. «Ապաշխարեցէք, ասում էր Փրկիչը, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ» Մատ. Դ. 17. «Եթէ ոչ ապաշխարէք, ոչ կարէք մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Յով. Գ. 15.):

Բ.

Միանում էր հայրը: Անկողնի մօտ կանգնած էր որդին՝ մի անհոգ, թեթեամիտ պատանի: Հայրը երկար ժամանակ աշխատել էր խելքի բերել նրան, բայց ամեն ջանք ի դուր էր անցել. ոչ խորհուրդ, ոչ համոզիչ խօսքեր և ոչ խնդիր չէին ազդում պատանու վրայ: Որդին օրերով և գիշերներով անյայտանում էր, քէֆերի և անառակութիւնների մէջ կորցնում իւր առողջութիւնն և ընդունակութիւնները: Հայրը վշտից հիւանդացաւ և այժմ մօտալուտ մահուան էր սպասում:

— Խեղճ որդի, ասում էր հայրը, իմ ցաւն ու դարտը կեանքից բաժանուելս չէ, այլ դու ես. դու իմ միակ որդին ես, ինչպիսի փափագ ունէի մտցնել քո սրտի մէջ բարին, սուրբը. քեզանից պատրաստել Աստուծոյ և մարդկանց հաւատարիմ մշակ և զորան ցաւ է ինձ համար

տեսնել, որ այդ մաքերս ի դերև ելան։ Չեմ յանդիմանում քեզ, երդում էլ չեմ պահանջում, որ կուղղուես, մի բան միայն խնդրում եմ, խօսք տո՛ւր մահուանիցս յետոյ մի շաբաթ՝ օրական 2—3 ժամ մնալ այս սենեակում, որտեղ ես այժմ մեռնում եմ։

Որդին զարմացաւ հօր այդ խնդիրը, լսելով, բայց որպէս զի մի բանով մխիթարած լինի նրան, որին այնքան վիշտ էր պատճառել, համաձայնեց։

Հայրը մեռաւ, թաղեցին։ Որդին եկաւ հօր սենեակը։ Դատարկ է, ոչ ոք չկայ։ Այլ ևս չի լսիլ նա հօր ձանձրալի փնդփնդոցը, կատարեալ ազատութիւն է, ապրիլ ինչպէս կամենում ես։ Սակայն որդու յիշողութեան մէջ կենդանանում են հօր խրատները, նրա տխուր աչքերն ու վշտից կտրուած ձայնը։

— Բայց չէ՞ որ հայրս սիրում էր ինձ, մտածում է որդին, և սրտանց ցանկանում էր, որ ինձանից դուրս գար ազնիւ, զգաստ, բարի մարդ։ Նա վաղ այրի մնաց և իւր բոլոր սէրը նուիրեց ինձ, ինչպիսի քնքշութեամբ փաղաքշում էր ինձ, ինչպիսի սիրով խօսում հետս Աստուծոյ արդարութեան և կեանքի բարութեան մասին, ինչպէս ուրախանում էր իմ ամեն մի բարի դործին, խելօք խօսքին, իսկ ես ինչ հատուցի դրա փոխարէն։

Անցնում էին րոպէները և որդու յիշողութեան մէջ կենդանանում էին մէկը միւսի յետևից իւր մեղկ կեանքից պատկերներ, ինչպիսի կեղտոտութիւն, ինչպիսի ամօթ և խայտառակութիւն, ուզում էր մոռանալ, մտածել, որ այդ բաները չեն եղել։

Արդէն անցան խոստացած ժամերը, սակայն նա դեռ ևս նստած էր՝ դուրսը խոնարհած ձեռների վրայ աչքերի մէջ փայլում էր արտասուքը։ Այդ օրը չգնաց իւր սովորական ընկերների մօտ։ Երկրորդ և երրորդ օրը նա կրկին մտաւ հօր սենեակը։ Սակսեց աւելի և աւելի պայծառ կերպով մտաբերել հօր լուսաւոր պատկերը, աւելի կենդանի զգալ յանդիմանութիւնների ցաւը, աւելի զգուելի դառնալ իւր նախկին կեանքը։ Առաջ երբէք իւր մասին

չէր մտածել դժբաղդ պատանին: Երբէք չէր նայել իւր խղճին այդ պատճառով էլ հոգին հանգիստ էր: Այժմ՝ իւր վրայ նայեց ուշադրութեամբ և սարսափեց: Արդեօք այն սիրուն երեխան է ինքը, որ մանկութեան ժամանակ ամենքի սիրելին էր. ինչ դարձաւ. կոշտացաւ, վայրենացաւ, փչացաւ: Հարկաւոր է դուրս գալ տղմի միջից, քանի դեռ բոլորովին չէ խրուած:

Հայրը գիտէր թէ ինչ էր անում, երբ որդուն խնդրեց, որ նա մի շաբաթ՝ օրական 2—3 ժամ անցկացնէ առանձնութեան մէջ: Որդին այդ ժամանակամիջոցում կարծես զգաստացաւ, ինչպէս մարդ զգաստանում է երկար հարբածութիւնից յետոյ: Խելքը գլուխը հաւաքեց, սկսեց ինքը իւր վրայ աշխատել, միանգամից շուռ եկաւ կեանքի դէպի մի այլ ճանապարհ: Մեր մայր եկեղեցին նոյնպէս գիտէ, թէ ինչ է անում, երբ մեզ համար ապաշխարութեան օրեր է նշանակում: Մեր կեանքը, ինչպէս պտոյտահողմ, պտըտացնում է մեզ. հողմերի, գործերի յետեւից ընկած՝ ժամանակ էլ չկայ մտածելու թէ դու ինչ ես արդեօք. ինչո՞ւ ես ստեղծուել, ապրում, ինչպէս ես անցկացնում տարիներդ. անում ես արդեօք այն, ինչ որ պէտք է անել, թէ այն, ինչ չպէտք է անել, կեանքը տանում է մեզ, ինչպէս ջուրը տանում է մի տաշեղ: «Ո՞ւր է իսկական ճանապարհը, ո՞ւր գնալ» ո՞վ է այդ մասին մտածում, դրա համար էլ մեր Մայր եկեղեցին ասում է. «կանգնիր, տարուայ մէջ գոնէ մի օր թող կեանքիդ հողմերը և մտածիր ինքդ քո մասին ո՛չ թէ դրսից, այլ ներսից: Ինքդ քեզ հաշիւ տուր քո մտքերի, զգացմունքների և գործերի մասին: Ամեն գործի մէջ տարին վերջանալուց յետոյ հաշիւ են տեսնում. դու էլ քո հաշիւը տես, տարուայ ընթացքում հոգուդ մէջ աւելացել թէ պակասել է Աստուծոյ արդարութիւնը: Մեզանից իւրաքանչիւրը կեանք է անցկացնում մի անգամ, ուստի և կեանքի ճանապարհը մեզ համար այնպէս է, ինչպէս ճանապարհը անծանօթ երկրում: Անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ կանգ առնել և մեր շուրջը նայել արդեօք ուղիղ ճանապարհից

չենք շեղուել: Անհրաժեշտ է հանգիստ առնել, նոր ոյժեր հաւաքել և յետոյ կրկին առաջ գնալ, ահա հոգու համար այդպիսի հանգիստ է ապաշխարութեան ժամանակը: Ուստի և մեր Մայր եկեղեցին մեզ ամենքին սիրով հրաւիրում է դէպի ապաշխարութիւն:

Հին կտակարանում, Մովսիսի պատուիրաններն մէջ Խորայեւացւոց տառած է. «շաբաթուայ վեց օրը կատարիր գործերդ, բարեկարգիր կայքդ, իսկ եօթներորդ օրը նուիրիր Աստուծուն, ծառայիր Աստուծոյ գործին երկրի վրայ: Այստեղ առաջարկում էր ոչ բարձրագոյն, այլ զիջողամիտ պահանջ. «Եթէ դուք այնքան կոպիտ էք, ասում էր Մովսիսի պատուէրը Խորայեւացւոց, որ չէք կարողանում բռնորովին մոռանալ ձեր մանր և չնչին գործերը ի սէր Աստուածային մեծ գործի, այն ժամանակ վեր առէք շաբաթուայ վեց օրը, իսկ Աստուծուն ամբողջովին նուիրեցէք գոնէ մի օր»: Այդպիսի զիջողամտութիւն է ցոյց տալիս և եկեղեցին: Պօղոս առաքեալը գրում է՝ «անդադար աղօթաւարարէք» (Թեա. ե. 17) միշտ ունեցէ՛ք աղօթելու տրամադրութիւն. ինչ որ անէ՛ք, ամենից առաջ արէ՛ք ի փառս Աստուծոյ, թող ձեր ամեն մի միաքը, խօսքը և գործը սրբունին աղօթքով և լինեն զանազան ձեւերով նոյն աղօթական ծառայութիւն Աստուծոյ. «գնում էք, թէ խմում, սովորեցնում է առաքեալը, կամ մի ուրիշ գործ կատարում, ամեն ինչ կարգացէ՛ք ի փառս Աստուծոյ»: Մենք բոլորս պատկանում ենք Աստուծուն և մեր ամբողջ կեանքը պէտք է լինի անընդհատ աստուածապաշտութիւն: Բայց ինչպէս հրէաները Քրիստոսի ժամանակ տաճարը դարձրել էին վաճառատեղի, որտեղ վաճառում էին եղներ և այլ կեդանիւններ, նոյնպէս և մենք մեր ամբողջ կեանքը աստուածապաշտութեան փոխանակ դարձրել ենք ունայնութեան վաճառատեղի: Ուստի և հոգատար Մայր եկեղեցին համոզում, յորդորում է մեզ. «Եթէ դուք միշտ հաշիւ չէք տալիս ձեր կեանքի մէջ, այն ժամանակ գէթ միանգամ տարուայ մէջ, գէթ յիսուն և երկու շաբաթներից մէկին ինքներդ ձեզ ազատ կացուցէք կեանքի սովորական

Հոգսերից: Երբ գետի հոսանքը պտոյտ է գալիս, այն ժամանակ ջուրը այնպէս է պղտորում, որ արևի լուսով իսկ այնտեղ ոչինչ չեն կարողանալ տեսնել. բայց վեր առէք այդ պղտոր ջրից մի բաժակ, թողէք որ ինքն իրան պարզուի, այն ժամանակ բոլոր կեղտոտութիւնները կնստի յատակին և ջուրը կդառնայ արտասուքի պէս մաքուր: Թողէք որ ձեր հոգւո մէջ էլ պղտորութիւնը յատակին նստի. գոնէ մի փոքր ժամանակ հեռացէք կեանքի պղտոր հոսանքից և առանձնացէք Աստուծոյ հետ:

Թարգմ. Գրիգոր Բախ. Նոր-Արեւեանց.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՅՅԸ ՂԵՀԱՓՍՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

23 Դեկտեմբ. 1906 թ.

Ամսոյս 19-ին ազգիս Վեհափառ Հայրապետի հրամանով Տեղապահ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը ուղեորուելով Երևան՝ Տ. Յուսիկ եպիսկոպոսի, Սինոդի անդամ Տ. Բաբղէն վարդապետի հետ ներկայանում են Կովկասի Տ. Փոխարքային և Նորին Սրբութեան կողմից բարի գալուստ մաղթելով, հրաւիրում են Նորին Պայծառափայլութեան շնորհ բերել ու Էջմիածին ընտանիքով հանդերձ Յաջորդօրը Վեհափառ Հայրապետի կանխագոյն կարգադրութեամբ Տեղապահ սրբազանը աղ ու հաց ներկացրեց վանքի պարըսպի մուտքի առաջ Տ. Փոխարքային և շնորհաւորեց նրա բարի ժամանումը ու Էջմիածին: Ապա սկսուեց զանգահարութիւնը և Տ. փոխարքան, իշխանուհի կոմսուհին, դուստրը, հարսը, և այլ բարձրաստիճան հիւրերը և հոգեւորական դասը շրջապատուած ժողովրդի խումբն բաղմու-